

Հաշվետվություն 2022

Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն

2022 թ. իրականացվող աշխատանքի նպատակն էր .

- հետազոտել հանրապետության մի շարք ձկնաբուծարանների ձկների վարակվածությունը ինվազիոն հիվանդություններով,

- առաջին անգամ, մեկ մարզի օրինակով (Արագածոտնի մարզ) կատարել խոզերի բրուցելյոզով վարակվածության համաճարակային վերլուծություն,

- իրականացնել կովերի կրծի գաղտնի բորբոքումների բուժումը յոդ պարունակող պատրաստուկներով,

-կատարել Արմավիրի մարզի ձկնաբուծական տնտեսություններից վաճառքի հանված ձկների նկատմամբ անասնաբուժասանիտարական փորձաքննություն:

Հետազոտությունները կատարվել են համաձայն 2022թ. օրացույցային պլանի:

1. Ենթաբաժին: Ձկների ինվազիոն հիվանդությունների տարածվածությունը հանրապետության ձկնաբուծարաններում, դրանց առաջացման պատճառներն և պայքարը:

Ձկնաբուծությունը Հայաստանում հանդիսանում է գյուղատնտեսության ամենահեռանկարային ճյուղերից մեկը:

Հանրապետության լճակային տնտեսություններում և բնական ջրամբարներում բուծվող ձկների մոտ մեծ տարածում ունեն ինվազիոն (մակաբուծային) հիվանդությունները, որոնք արգելակում են ճյուղի զարգացումը:

Վերջին տարիներին մեր հանրապետություն մուտք են գործել նոր հարուցիչներ, որոնց կողմից հարուցված հիվանդություններին հանրապետության անասնաբուժական ծառայության մասնագետները դեռևս ծանոթ չեն:

Ելնելով վերոհիշյալից 2022թ. ընթացքում Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնի մակաբուժաբանական լաբորատորիայում իրականացվել է ձկների լրիվ մակաբուժաբանական հետազոտություն ըստ Ի.Ե. Բիխովսկայա-Պավլովսկայայի:

Հետազոտությունների համար նյութ են հանդիսացել ձկնաբուժաբաններում աճեցվող և բնական պայմաններում ապրող ձկները, որոնք բերվել են հետևյալ վայրերից՝

- Ջրառատի ձկնաբուժական տնտեսություն
- Արարատի մարզի լճակներ
- Սևանա լիճ
- Սիս գյուղի ձկնաբուժական տնտեսություն
- Հրազդան գետի ստորին հոսանք՝ Երևան քաղաքի սահմաններում
- Հրազդան գետի ստորին հոսանք՝ Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանից
- Ախուրյան գետ
- Ախուրյանի ջրամբար
- Ապարանի ջրամբար
- Դեբեդ գետից՝ Ալավերդի քաղաքի սահմաններում

Համեմատելով մեր ուսումնասիրության արդյունքները նախորդ տարիների տվյալների հետ, կարելի է եզրակացնել, որ նկատվում է Հայաստանի Հանրապետության բնական ջրավազաններում բնակվող ձկների՝ հատկապես նախկինում ամենաշատ մակաբույծներ ունեցող լճաձաձանի, արտաքին մակաբույծների ֆաունայի շարունակական աղքատացում, ինչը հավանաբար պայմանավորված է անխնա ջրօգտագործման հետևանքով ձկների էկոհամակարգերի փոփոխման և տարբեր ծագման նյութերով ջրավազանների ախտոտման հետևանք: Ի տարբերություն նախորդ տարիների տվյալների զգալիորեն նվազել են նաև ձկների վարակվածությունը ներքին մակաբույծներով: Հավանաբար, դա պայմանավորված է ջրի ջերմաստիճանի բարձրացմամբ:

Աշնան ամիսներին Հայաստանի Հանրապետության բնական ջրավազաններում բնակվող ձկների մակաբույծների ֆաունայի որակական և քանակական ցուցանիշները նույնպես անհամեմատ ավելի հարուստ են, քան արհեստական պայմաններում բուծվող ձկներինը: Վերջինների մոտ հայտնաբերվում են հիմնականում արտաքին մակաբույծներ՝ հատկապես ինֆուզորիաներ: Ձմռանը խիստ վարակված, թուլացած ձկները սատկում են կամ հեշտությամբ որսվում գիշատիչների կողմից:

Բացառություն են կազմում Սևանա լճի սիգերը, որոնց մոտ՝ անցած տարվա համեմատ, մակաբույծներով վարակվածության պատկերը գրեթե չի փոխվել:

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ հյուսիսային տարածաշրջանների՝ հատկապես Դեբեդ գետի ձկների մակաբույծների ուսումնասիրությունն է: Հետազոտվել է 2 տեսակի ձուկ՝ Քուռի բեղլուն և Քուռի կողակը: Հետազոտված ձկների մոտ գերիշխող մակաբույծը *Rhabdochona fortunatowi* աղիքային նեմատոդն է, որը մինչ այդ Հայաստանում հայտնի էր միայն Սևանա լճի ավազանի ջրակալների ձկների մոտ:

Այսպիսով, ձկների մոտ Սևանա լճից բացի՝ կրկին նկարագրվել են աղիքային նեմատոդներ, ինչը վկայում է մակաբույծների արեալների ընդլայման և նրանց կենսաբանական ցիկլերում նոր տերերի ընգրկման մասին:



Rhabdochona fortunatowi

2. Ենթաբաժին: Առաջին անգամ, մեկ մարզի օրինակով (Արագածոտնի մարզ) կատարվել է խոզերի բրուցելյոզով վարակվածության համաճարակային վերլուծություն:

Խոզերի բրուցելյոզի համաճարակային իրավիճակի գնահատումը խիստ կարևոր է հիվանդության ախտորոշման, կանխարգելման ու պայքարի մջոցառումների իրականացման գործընթացում:

Ակներև է նաև այն փաստը, որ մարդկանց վարակումը խոզերի բրուցելյոզի հարուցչով պայմանավորված է ոչ միայն հիվանդ կենդանիների հետ շփմամբ, այլ նաև դրանցից ստացված կենդանական ծագման մսամթերքի և ենթամթերքի օգտագործմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բրուցելակիր կենդանիներ հատնաբերելու նպատակով կատարվել է արյունառություն Արագածոտնի մարզի՝ մասնավոր տնտեսվարողներին պատկանող խոզաբուծական տնտեսությունների սեռահասուն խոզերից: Բրուցելոզի նկատմամբ նմուշառված արյան 50 շիճուկում հակամարմինների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար օգտագործվել են Ռոզ-Բենգալ թեսթը և ազյուտինացման ռեակցիան: Վերը նշված մեթոդների կիրառման արդյունքում գրանցվել է 10 դրական և 20 կասկածելի ռեակցիա: Բրուցելոզի շիճուկաբանական տիպը որոշելու (ELISA) նպատակով դրական և կասկածվող արյան շիճուկները համարակալվել և տեղադրվել են սառցախցիկում:

3. Ենթաբաժին: Կովերի կրծի գաղտնի բորբոքումների բուժումը յոդ պարունակող պատրաստուկներով:

Հետազոտվել են հիմնականում կովկասյան գորշ և սիմենտալ ցեղատեսակի 170 կովեր, որոնցից 65-ի մոտ ախտորոշվել է գաղտնի մաստիտ: Հիվանդ կենդանիների նկատմամբ իրականացվել են բուժիչ միջոցառումներ՝ կապույտ յոդի օգտագործմամբ: Գաղտնի մաստիտը ախտորոշվել է կասկածելի կլինիկական նշաններ ունեցող կենդանիներից վերցված կաթի նմուշներում

սոմատիկ բջիջների հաշվարկմամբ՝ թեստային եղանակով (Կալիֆորնիական թեստ):

Իրականացվել է նաև գաղտնի մաստիտի բուժում կապույտ յոդի լուծույթի և այլ դեղանյութերի օգտագործմամբ, ապա տրվել է այդ դեղանյութերի ազդեցության արդյունավետության համեմատություն:

Փորձերի արդյունքները վկայում են, որ կապույտ յոդի ներքին և միաժամանակ ներպտկային ներմուծումը արագացնում է գաղտնի մաստիտի բուժումը 2-3 օրով, ինչը պայմանավորվում է կապույտ յոդի հակաբորբոքային և իմունախթանիչ հատկություններով:

Հիվանդության կանխարգելումն իրականացվել է կովերի կրծի պտուկների մաշկը ամինոյոդինով (կապույտ յոդ) մշակելու միջոցով:

Կատարվել է նաև կովերի կրծի պտուկների մաշկից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտություն, որի արդյունքում մանրէների գաղութների քանակը փորձնական խմբի կենդանիների մոտ՝ ամիլյոդինով մշակելու հետևանքով զգալիորեն նվազել է: Երբ կրծի պտուկներն ընկղմվում են ամիլոիդինի լուծույթի մեջ, բաժրանում է պտկային խողովակի սեղմակի տոնուսը, պտկի ծայրից հեռանում է կթելուց հետո մնացած վերջին կաթիլը, իսկ պտկի մաշկի վրա առաջանում է պաշտպանիչ թաղանթ: Արդյունքում նվազում է կաթնագեղձ պտկային խողովակով ախտածին մանրէների ներթափանցումը: Այս հանգամանքը նպաստում է մաստիտների առաջացման կանխարգելմանը և կաթի բակտերիալ ախտոտման նվազմանը:

Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ կապույտ յոդը հանդիսանում մաստիտների կանխարգելման արդյունավետ միջոց:

4. Ենթաբաժին: Արմավիրի մարզի ձկնաբուծական տնտեսություններից վաճառքի հանված ձկների անասնաբուժասանիտարական փորձաքննության գնահատականը

Ձկան միսը կենդանական ծագում ունեցող ամենաարժեքավոր սննդամթերքներից է: Ունենալով շատ օգտակար հատկություններ, այն

միաժամանակ կարող է նաև մի շարք հիվանդությունների և թունավորումների պատճառ հանդիսանալ:

Արմավիրի մարզի Ջրառատ գյուղի տարածքում արհեստական ձկնաբուծական տնտեսությունների ջրավազաններից կատարվել է ձկների նմուշառում:

Բերված նմուշները ենթարկվել են փորձաքննության և ստացված արդյունքների հիման վրա տրվել են նշված մարզի արհեստական ձկնաբուծական տնտեսություններում բուծվող ձկների ձկնամսի սանիտարական գնահատականը:

Ձկան թարմությունը որոշելու համար կատարվել են հետևյալ լաբորատոր հետազոտությունները՝ pH-ի որոշում, ամոնիումի աղերի որոշում և փորձ 5%-CuSO₄-ով: Հետազոտված 84 ձկներից 28-ը ունեցել են կասկածելի, իսկ 6-ը օգտագործման համար պիտանի չեն եղել:

Ըստ զգայաբանական և լաբորատոր հետազոտությունների ձկների նմուշները եղել են թարմ և կասկածելի թարմության: Ձկների որոշ նմուշեր ունեցել են 6,8-ից բարձր pH:

Թարմ ձկնամսի մակերեսից պատրաստված արտատպվածքում մանրէների քանակը հասնում էր 13-14, իսկ խորքից պատրաստված արտատպվածքում՝ 4-5:

Կասկածելի թարմության ձկնամսի մակերեսից պատրաստված արտատպվածքում մանրէների քանակը հասնում էր 22-23, իսկ խորքից պատրաստված արտատպվածքում՝ 10-11:

Փչացած ձկնամսից բակտերիոսկոպիա կատարելիս ստացվել են հետևյալ արդյունքները՝ մակերեսից պատրաստված արտատպվածքում մանրէների քանակը հասնում էր մինչև 35-36, իսկ խորքից պատրաստված արտատպվածքում՝ 23-24:

Լաբորատոր հետազոտությամբ իրականացվել է ծծմբաջրածնի և ռեդուկտազայի որոշման փորձերը: Ծծմբաջրածնի որոշումը իրականացվել է ըստ

Վ.Ի. Պոյդակի, համապատասխան ԳՈՍՏ 7636-55, որը բնորոշում է ձկան սանիտարական որակը:

Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ բերված բոլոր նմուշները իրենց որակական հատկանիշներով՝ ըստ ծծմբաջրածնի և ռեդուկտազիայի առկայության համապատասխանել են որակյալ ձկնամսի ստանդարտով նախատեսված որակի ցուցանիշներին, բացառություն են կազմել ձկան 28 նմուշներ, որոնց մկաններից պատրաստված մզվածքում հայտանբերվել է ինչպես ռեդուկտազա ֆերմենտներ, այնպես էլ ծծմբաջրածին և ըստ որակի համապատասխանել են կասկածելի թարմության ձկնամսի որակական հատկանիշներին, 6 նմուշ օգտագործման նպատակով պիտանի չեն եղել:

2022թ. ընթացքում տպագրվել են 23 հոդվածներ, 5 մեթոդական ցուցումներ, իսկ 9 հոդվածներ հանձնված են տպագրության՝ որոնցից 1-ը իրանական Scopus <<Veterinary Research Forum>> ժողովածույում: Նախորդ տարվա համեմատությամբ հոդվածների տպագրությունը աճել է 10 անգամ:

Տպագրված հոդվածներ

1. Ж.С. Мелкоян, К.А. Сукиасян, Э.А. Никогосян, А.В. Сиреканян ЛЕЧЕНИЕ ВИРУСНОГО ПАПИЛЛОМАТОЗА У ПЕРВОТЕЛОК, Агронаука и технология, N 1 (77)/2022, стр 85-88, anau.am/scientific-journal, doi: 10.52276/25792822-2022.1-85
2. Վ.Աբրահամյան, Գ. Պետրոսյան, Ա. Աբովյան, Ս. Ալթունյան <Չնախատեսված վայրերում վաճառվող կաթի սանիտարական գնահատականը, Ագրոգիտություն և տեխնոլոգիա, N1-(77), 2022, էջ89-94, doi:10.52276/25792822-2022.1-89
3. Ս.Պ. Արզումանյան Պատահական վայրերում վաճառվող կաթի գնահատականը, Ագրոգիտություն և տեխնոլոգիա, N1, (77), 2022, էջ 95-99, doi: 10.52276/25792822-2022.1-95
4. Л.Г.Цатурян, О.Д.Скляров, Д.В.Федюшин, В.В.Каваносян, М.А.Кузменко, В.В.Абрамян. Иммунобиологические свойства вакцинных штаммов Bacillus anthracis. Ветеринария N 5, стр. 32-37, Москжа 2022
5. V.V. Grigoryan, A.R. Hakobyan, S.V. Yeribekyan, L.H. Grigoryan <<Some Epizootological Peculiarities of Chicken Eimeriosis in the Small Poultry Farms>>, AGRISCIENCE AND TECHNOLOGY, N-2(78)/2022, p.162-165, doi:10.52276/25792822-2022.2-162,
6. A.R. Hakobyan, A.R. Mkrtchyan, <<Epidemiological Peculiarities and Economic Efficiency of Veterinary Measures in Case of Diplococcal Infection of Pigs>>, AGRISCIENCE AND TECHNOLOGY, N-2(78)/2022, p.166-170, doi: 10.52276/25792822-2022.2-166

7. A.V. Vardanyan, L.V. Chobanyan, H.D. Harutyunyan, «Treatment of Third-Degree Thermal Burns in Dogs with Ozonated Vegetable Oil», *AGRISCIENCE AND TECHNOLOGY*, N 2(78)/2022, p. 171-174, doi: 10.52276/25792822-2022.2-171
8. Акопян А. Р., Григорян В.Г., Щербаков О.В., Абовян А.Ю., Григорян Л.Г., «БОЛЕЗНИ РЫБ, ВЫЗЫВАЕМЫЕ ПАТОГЕННЫМИ РЕСНИЧНЫМИ, В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ», ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ НАУЧНОЙ И ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МОЛОДЕЖИ В ВЕТЕРИНАРИИ Материалы международной научно-практической конференции студентов, магистрантов, аспирантов и молодых ученых 15 июля, пос. Персиановский 2022 года, ISBN 978-5-98252-414-0
9. L.H. Grigoryan, A.R. Hakobyan, A. R. Mkrtchyan, O. V. Shcherbakov, S. V. Eribekyan, V. V. Grigoryan THE PATTERN OF PREVALENCE OF CHICKEN EIMERIASIS IN THE REPUBLIC OF ARMENIA, *Biolog. Journal of Armenia*, 3 (74), 2022, p. 6-13
10. Վ. Վ. Գրիգորյան, Լ. Հ. Գրիգորյան, «ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱԲԵԶԻՈՂԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ» Ագրոգիտություն և տեխնոլոգիա, Երևան 2022, N-3, էջ 296-299
11. О. В. Щербаков, А. Р. Акопян, В. В. Григорян, Л. Г. Григорян, «ТРЕМАТОДЫ И ТРЕМАТОДОЗЫ РЫБ В АРМЕНИИ», МАТЕРИАЛЫ IV МЕЖДУНАРОДНОГО ПАРАЗИТОЛОГИЧЕСКОГО СИМПОЗИУМА «СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕЙ И ЧАСТНОЙ ПАРАЗИТОЛОГИИ», стр. 278-281, Санкт-Петербург 2022
12. В. В. Абрамян, М. Э. Мкртчян, А. С. Казарян, «ВЛИЯНИЕ ЖЕЛУДОЧНО-КИШЕЧНЫХ НЕМАТОД НА АМИНОКИСЛОТНЫЙ СОСТАВ БЕЛКОВ МЯСА ОВЕЦ», МАТЕРИАЛЫ IV МЕЖДУНАРОДНОГО ПАРАЗИТОЛОГИЧЕСКОГО СИМПОЗИУМА «СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕЙ И ЧАСТНОЙ ПАРАЗИТОЛОГИИ», стр. 4-7, Санкт-Петербург 2022, УДК 637.5:63.045:616.995.132
13. Ա.Վ.Վարդանյան, Կ.Ա. Սուրիապյան, Է.Ա.Նիկողոսյան, Ժ.Ս. Մելքոնյանի «Գաղտնի մաստիտի բուժումը կապույտ յողի կիրառմամբ» «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», 2022-3, էջ 312-316, doi: 10.52276/25792822-2022.3-312
14. Ա. Ռ. Հակոբյան «ԽՈՂԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ԱՏՐՈՖԻԿ ՌԻՆԻՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՈՐՈՇ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ», 2022.3, էջ 300-304, doi: 10.52276/25792822-2022.3-300
15. V.V. Grigoryan, O. V. Shcherbakov, A.R. Hakobyan, L.H Grigoryan, <<OPHTHALMOHELMINTHIASIS IN THE WATER BASINS OF ARMENIA>>, *Agroscience and technology*, N -4, 2022
16. Վ.Վ. Աբրահամյան, Լ.Հ. Գրիգորյան, Ա.Յ. Աբովյան, Ա.Ս., Ղազարյան, Ձկան անասնաբուժական սանիտարական փորձաքննությունը «Մաքսիմ Սաֆարյան» ձկնաբուժական տնտեսությունում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու 13 էջ 126-138, 2022
17. Վ. Վ. Գրիգորյան, Օ. Վ. Շչերբակով, Ա. Ռ. Հակոբյան, Լ. Հ. Գրիգորյան, «ՎԱՐԱԳԱՋՈՒՐ ԳԵՏԻ ՁԿՆԵՐԻ ՀԵԼՄԻՆԵՐՆԵՐԸ», Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու 13, էջ 37-43, 2022
18. A.R. Mkrtchyan, V. V. Grigoryan, H. T. Tadevosyan, L. H. Grigoryan, SOME BIOLOGICAL FEATURES OF STAPHYLOCOCCI ISOLATED FROM MILK OF COWS WITH MASTITIS, *Agroscience and technology*, N-4, 2022
19. Մ.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ, Հ. Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ «< ԲՐՈՒՑԵԼՈՂԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ>> ԹԵՄԱՅՈՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀԱԱՀ, Երևան - 2022. - 20 էջ

20. Մ.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ, Ա. Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ, Հ. Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ, Գ.Ռ.ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՈՒՂԵՑՈՒՅՑ «<ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԹՌՉՆԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ>> ՆՅՈՒՔԱՍԼՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ՀԱԱՀ, Երևան 2022, 20 էջ
21. Ա.Ռ. Մկրտչյան, Մ.Ա. Սարգսյան, Ա.Ռ. Հակոբյան, Հ.Հ. Թադևոսյան, ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ «<Ոչխարների ծաղիկ հիվանդության ախտորոշման եղանակները, կանխարգելման և պայքարի միջոցառումները>> թեմայով լաբորատոր-գործնական պարապմունքներ անցկացնելու վերաբերյալ, ՀԱԱՀ, Երևան 2022, 21 էջ
22. Վ. Գրիգորյան, Լ. Գրիգորյան, Օ. Շչերբակով «<Ախտածին նախակենդանիների հայտնաբերման լաբորատոր մեթոդները>> մեթոդական ցուցումներ մակաբուծաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ առարկայից, ՀԱԱՀ, Երևան 2022, 20 էջ
23. Գ.Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա.Յ. ԱԲՈՎՅԱՆ, Ռ.Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մեղվամոմի սանիտարական փորձաքննություն Մեթոդական ցուցումներ ՀԱԱՀ, Երևան 2022, էջ 20
- 24 Մ. Ա. Սարգսյան, Հ. Ս. Բալասանյան, Գ. Ռ. Թովմասյան «<ԽՈՂԵՐԻ ԲՐՈՒՑԵԼՈՂՈՎ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ>>, Ազրոզիտություն և տեխնոլոգիա N-4. Երևան 2022
25. М. Р. Бегларян, Д. А. Пипоян, А. В. В. Абрамян ОЦЕНКА РИСКА МАЛАХИТОВОГО ЗЕЛЕНОВОГО В РЫБЕ, ВЫРАЩЕННОЙ В АРМЕНИИ, Сборник материалов Всероссийской (национальной) конференции, посвященной 30-летию образования ветеринарного факультета «АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ВЕТЕРИНАРНОЙ МЕДИЦИНЫ: ОБРАЗОВАНИЕ, НАУКА, ПРАКТИКА», Тюмень 2022, 15 мая, стр. 409-417
26. Hranush Avagyan^{1,2}, Sona Hakobyan¹, Arpine Poghosyan ¹, Lina Hakobyan ¹, Liana Abroyan¹, Elena Karalova ^{1,2}, Aida Avetisyan ^{1,2}, Mariam Sargsyan ³, Bagrat Baghdasaryan ¹, Nane Bayramyan ¹, Diana Avetyan ⁴ and Zaven Karalyan ^{1,5,*} Article Severe Acute Respiratory Syndrome Coronavirus-2 Delta Variant Study In Vitro and Vivo, Curr. Issues Mol. Biol. 2023, 45, 249–267. <https://doi.org/10.3390/cimb45010019>
<https://www.mdpi.com/journal/cimb>

27. Arthur Robert Mkrtchyan, Liana Hayk Grigoryan, Valery Volodya Grigoryan, Oleg Valery Shcherbakov, Arevik Yury Abovyan, Karine Ashot Tonoyan, "Canine Leishmaniasis in Yerevan, Published in IJAIR , Journal Volume - 10, Issue - 4, ISSN (Online) 2319-1473, Jan.-Feb.,2022 IJAIR/CERT./3368 The Board of the International Journal of Agriculture Innovations and Research (IJAIR), Published: 25/01/2022, page 112-122
28. Arthur Robert Mkrtchyan, Viktor Vahan Abrahamyan¹, Liana Hayk Grigoryan, Valery Volodya Grigoryan, Anush Rafik Hakobyan¹, Oleg Valery Shcherbakov, Spartak Vahan Eribekya ·PREVALENCE OF CHICKEN EIMERIASIS IN SOME REGIONS OF THE REPUBLIC OF ARMENIA, International Journal of Agriculture Innovations and Research (IJAIR), Volume 10, Issue 5, page 202-209, ISSN (Online) 2319-1473, | Published: 17/04/2022

Իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 21T-4A007 ծածկագրով <<Հավերի էյմերիոզի տարածվածությունը Հայաստանի ֆերմերային և անհատական տնտեսություններում>> թեման, որում ընդգրկված են բուհի 3 պրոֆեսորադասախոսական անձնակազմի 3 աշխատակիցներ:

Հետազոտական կենտրոնի շրջանակներում ձեռք են բերվել՝ 2 համակարգիչներ և ուլտրաձայնային լոգնոց: